

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Ներդիր՝ «Հորիզոն»ի Մանկապատանեկան յաւելում

Հրեայ պատմաբան Եայիր Օրոնի «Մուսա Լերան 100 տարիները» գիրքը՝ նոր վկայություն Հայոց Յեղապանության մասին, էջ 3

Հարցազրույց Ահունցիք-Գարթիէրվիլ ընտրատարածքի քաղաքապետի թեկնածու Յարութ Օրթիլեանի հետ, էջ 4

Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Միջ-թեմական Հոգեւորականաց «Վերանորոգում» թեմայով համագումարը հասաւ իր աւարտին, էջ 5

Դիմատետրի տարածքէն ներս զգուշութիւնը լաւ բան է, էջ 6

Ապակառուցել Քաղաքականութիւնը, էջ 7

Ժընեի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն հանդիպումը

ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներուն նախաձեռնութեամբ, ժընեի ՄԱԿի գրասենեակի եւ այլ միջազգային կազմակերպութիւններու՝ Զուլիցերիոյ մօտ մշտական ներկայացուցիչի կեցութեան վայրին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի ու Ատրպէյճանի Հանրապետութեան նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:

Հանդիպումը տեղի ունեցաւ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներ Էդուարդ Նալբանդեանի եւ Էլմար Մամետեարովի, ինչպէս նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ Իկոր Փոփովի (Ռուսիա), Էնտրու Շոֆրի (Միացեալ Նահանգներ), Սթեֆան Վիսքոնթի (Ֆրանսա) եւ ԵԱՀԿի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասպրէրէի մասնակցութեամբ:

Հանդիպումէն ետք տեղի ունեցաւ նախագահներուն առանձնազրույցը:

Հանդիպումէն ետք յայտարարութիւն տարածած են ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները ուր կ'ըսուի. «Նախագահները պայմանաւորուեցան միջոցներ ձեռնարկել՝ աշխուժացնելու բանակցային գործընթացը եւ յաւելեալ քայլերու նախաձեռնել՝ թուլացնելու լարուածութիւնը շփման գիծին երկայնքով»:

Հայ Դատի Յանձնախումբը հանդիպում ունեցաւ Գանատայի ժառանգութեան նախարար՝ Մէլանի Ժոլիի հետ



14 Հոկտեմբերին ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի հերթական հանդիպումներու ծիրէն ներս, յանձնախումբը ներկայացնող պատուիրակութիւն մը յատուկ հանդիպում ունեցաւ Գանատայի ժառանգութեան նախարար Մէլանի Ժոլիի հետ:

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկեցին Հայ Դատի յանձնախումբի նախաձեռնած յառաջիկայ կարգ մը ծրագիրները, միջ-մշակութային յարաբերութիւնները եւ բազմամշակութայնութեան վերաբերող շարք մը հարցեր: Հայ Դատի պատուիրակները նախարարին հետ քննարկեցին նաեւ Գանատա-Հայաստան յարաբերութիւններու ոլորտը, միջազգային կազմակերպութեանց մէջ եւ մասնաւոր Ֆրանսախօս երկիրներու շրջանակներէն ներս գոյգ պետութեանց համագործակցութիւնը: Նախարարին հետ քննարկուեցան նաեւ Հայ Դատի առնչուող շարք մը առաջնահերթութիւններ:

Իր կարգին, նախարար Ժոլի զրուստեղով Հայ Դատի յանձնախումբի աշխատանքները, վերահաստատեց իր աջակցութիւնը Գանատահայութեան եւ Հայ Դատի աշխատանքներուն:

Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբը հանդիպում ունեցաւ խորհրդարանական քարտուղար Թէրի Պիչի հետ



Հոկտեմբեր 13-ին, Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ Յակոբ Տէր Յակոբեան եւ Թիթա Քոչիկերեան հանդիպում ունեցան Գանատայի ձկնաբուծութեան եւ ովկիանոսային հարցերու խորհրդարանական քարտուղար Թէրի Պիչի հետ, որուն հետ քննարկեցին յատկապէս Հայաստան-Գանատա յարաբերութիւնները առաւել եւս զարգացնելու կարելիութիւններն ու Հայաստանի մէջ զանազան դեպքերու հաստատման անհրաժեշտութիւնը:

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

facebook.com/pages/horizonweekly

@horizonweekly

2017
CR-V
STARTING FROM
\$26,890*

Image for illustration purposes only.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



ADONIS

Un univers de fraîcheur

2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

www.groupeadonis.ca

Suivez-nous !



Հրեայ պատմաբան Եայիր Օրոնի «Մուսա Լեւրան 100 տարիները» գիրքը՝ Այս վկայութիւնը Հայոց Յեղասպանութեան մասին

Առաջին անգամ չէ, որ հրեայ պատմաբան եւ ցեղասպանագէտ Եայիր Օրոն կ'անդրադառնայ Մուսա Լեւրան հերոսամարտի մասին: Երկու տարի առաջ ան հրատարակեց «Փրկիչներ ու մարտիկներ» գիրքը, որ կը պատմէ նացիական շրջափակման տարիներուն՝ հրեաներ փրկած հայերու մասին, թէ ինչպէ՞ս ֆրանսահայ երգիչ Շառլ Ազնաւուրի ծնողները Փարիզի մէջ փրկած են հալածանքներու ենթարկուած եւ իրենց մօտ ապաստանած հրեաներու՝ վտանգելով իրենց սեփական կեանքը: «Փրկիչներ ու մարտիկներ» գրքին մէջ Օրոն դարձեալ յիշատակած է Մուսա Լեւրան պատմութիւնը:

Հայոց Յեղասպանութեան մասին բազմաթիւ գիտական աշխատանքներու հեղինակ հրեայ ցեղասպանագէտ Եայիր Օրոն իր նոր հրատարակած «Մուսա Լեւրան 100 տարիները» գիրքի նախաբանին մէջ յստակօրէն կը շեշտէ, որ գիրքի լոյս ընծայումը կոչ մըն է Իսրայէլի պետութեան՝ ի վերջոյ պետականօրէն եւ պաշտօնապէս ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը: Օրոն կը գրէ. «Երբ Իսրայէլը, հայրենիքս, կ'ուրանայ Հայոց Յեղասպանութիւնը, այդ ընթացքով կը դաւաճանէ ու կը նսեմացնէ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակը, միաժամանակ դաւաճանելով Հրէական Յեղասպանութեան զոհերուն ու յիշատակին»: Գիրքին նախաբանին մէջ հեղինակը գիրքը կը ձօնէ հայկական եւ հրէական ցեղասպանութեան զոհերուն:

Գիրքը կը բաղկանայ 11 ենթագլուխներէ, որոնցմէ առաջինը կը կրէ «Իսկական պատմութեան իսկական հերոսը» խորագիրը. այստեղ հեղինակը լուսարձակի

տակ կ'առնէ Մուսա Լեւրան հերոսամարտի գինուորական հրամանատար Մովսէս Տէր Գալուստեանի կեանքն ու քաղաքական գործունէութիւնը, շեշտադրուած կատարելով հերոսամարտի ընթացքին ինքնապաշտպանութեան մարտական գործողութիւնները կազմակերպելու իր որոշիչ դերակատարութեան վրայ: Այս հատուածով Օրոն վկայակոչուածներ կը բերէ պատմաբան Աշոտ Ներսիսեանի Կարօ Մասունիի մասին գրած աշխատութեան: Գիրքի յաջորդ ենթագլուխով սեղմ գիծերու մէջ կը ներկայացուի ֆրանսական նաւերու միջոցով իրագործուած փրկութեան գործողութիւնը:

Յաջորդող ենթագլուխներուն մէջ Օրոն խորքային ձևով կ'անդրադառնայ «Մուսա Լեւրան 40 օրերը» վէպի հեղինակ Յրանց Վերֆէլի անձինն ու գործունէութեան, շեշտելով, որ վէպը գրելու իր տարերքին մէջ, Վերֆէլ տարիներով ուսումնասիրած է պատմական արխիւներ, ականատեսներու վկայութիւններ, փաստաթուղթեր եւ լրագրական աղբիւրներ:

Չորրորդ ենթագլուխով Օրոն կը ներկայացնէ «Մուսա Լեւրան 40 օրեր»ու առթած ազդեցութեան հոլովոյթը երկրորդ աշխարհամարտի ընթացքին հրէական սփիւռքին մէջ, յստակապէս եւրոպական սփիւռքի գերմանական, աստորիական եւ լեհական հրեայ գաղութներուն մէջ: Միաժամանակ, 1934-ին, Թէլ Աւիվի մէջ առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի վէպի երբայերէն տարբերակը՝ Ժողէֆ Լիխթենպոմի թարգմանութեամբ:

Օրոն կը գրէ, որ Մահուան դէմ պայքարող մուսալեզիներու ծառայումը լեւրան մը վրայ, Համաշխարհային Բ. պատերազմի տարիներուն հրեաներուն կողմէ



կը վերածուի Մասսատայի բարձունքին վրայ ԲԱ. 70 թուականին Հռոմէական կայսրութեան դէմ իրենց ըմբոստութեան համարժէք պատմական եղելովի:

Հինգերորդ եւ վեցերորդ ենթագլուխներով, պատմաբան Օրոն արխիւային հարուստ շտեմարան մը բանալով կը գրէ, թէ ինչպէ՞ս Վարչաւոյ եւ Եւրոպայի տարածքին գտնուող հրէական թաղամասերու ու կէթոններու գիմադրական շարժումներուն մէջ Վերֆէլի վէպը իսթան եւ ներշնչումի աղբիւր հանդիսացած է հրեայ ժողովուրդին երկրորդ աշխարհամարտի օրերուն, իսկ հրէական կեդրոնացման ճամբարներու մէջ՝ յոյս ներշնչած դէպի ստոյգ մահ գացող բազմահազար տառապեալներու:

Իր այս աշխատութեան մէջ Օրոն կը շեշտէ պատմական յիշողութեան կենսական գործը հրեայ սերունդներու ազգային ժառանգութեան կազմութեան հոլովոյթին մէջ: Գիրքի եզրափակիչ բաժինով, Օրոն կը մէջբերէ «Մուսա Լեւրան 40 օրերը» վէպի առաջին երբայերէն հրատարակութեան առիթով գրուած Մոշէ Պէլլիստինի գրախօսականի մէկ նախադասութիւնը, ուր վերջինս կը գրէ.

«Այս գիրքը սերունդներու համար գրուած գիրք է»: Օրոն կը շարունակէ գրելով, որ դժբախտաբար հրեայ ժամանակակից սերունդը անտեղեակ է Մուսա լեռնիներու մղած հերոսամարտին: Ան անհրաժեշտ կը նկատէ Յրանց Վերֆէլի վէպին ներառուած Իսրայէլի պետական կրթական ծրագրին մէջ, ինչպէս նաեւ ուսումնական բարձրագոյն կրթարաններու պատմութեան բաժանմունքներու ծրագրիներուն մէջ, որովհետեւ Վերֆէլի վէպը «այնպիսի գրական երկ մըն է, որ կարողութիւնը ունի արդարութեան եւ մարդկային իրաւանց արժէքները ուսուցանելու համայն մարդկութեան»:

Անգլերէն լեզուով գիրքը հրատարակուած է Մոնթրէալի մէջ, Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Գանատայի Միացեալ մարմնի նախաձեռնութեամբ: 106 էջ հաշուող գիրքի խմբագիրն է գանատահայ գրող Անոյշ Ակներեան: Ընդամենը Թէլ Աւիվի մէջ լոյս պիտի տեսնէ գիրքի երբայերէն տարբերակը:

«Հայոց ցեղասպանութիւնն ու սինիզմը. անընդունելի անտարբերութիւն», «Կատարեալ անարդարութիւն. Յեղասպանութիւնը եւ հայութեան ունեցուածքի կողոպուտը», «Փրկիչներ ու մարտիկներ» գիրքերու եւ Հայոց Յեղասպանութեան մասին բազմաթիւ պատմագիտական աշխատութիւններու հեղինակ Եայիր Օրոնի «Մուսա Լեւրան 100 տարիները» գիրքը թրքական ուրացման քաղաքականութիւնը արեւելակող նոր վկայութիւն է, իսկ Իսրայէլի խուսափողական քաղաքականութեան դէմ պատմական ճշմարտութիւնը ընդունելու յստակ պատգամ է:

ՎԱՀԱԳՆ ԳԱՌԱԳԱԾԵԱՆ

Linda Kharaboyan | Notaire Notary
Ձեր և տնտեսական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցրէ մեզի
Vos affaires. À cœur.
Therrien Couture | 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313
Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction
647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3
photocrystal@hotmail.com www.photocrystal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager
COMPTES D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650
Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիք ունի 20 հայ թաքսի վարորդի Միքսայէլ շրջանին մէջ: Հաճեցիք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc. Agence Immobilière
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN
POSE D'ONGLES
RÉSINE ET POUDDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURVEMENT SUR ONGLES NATURELS
Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

Հարցազրույց Ահունցիք-Գարթիէրվիլ ընտրատարածքի քաղաքապետի թեկնածու Յարութ Ծիթիլեանի հետ

Հ.- Պարոն Յարութ, ե՞րբ մտած էք քաղաքական ասպարէզ, ինչպէ՞ս, եւ ի՞նչ եղած է ձեր գործունէութիւնն ու ներդրումը այդ ծիրէն ներս:

Յ.Շ.- Ութը տարի առաջ, 2009-ին, երբ 28 տարեկան էի, առաջին անգամ ըլլալով մասնակցեցայ քաղաքական ընտրութիւններուն որպէս թեկնածու, իսկ երկրորդ անգամ՝ 2013-ին: Այդ միջոցին վարեցի տարբեր պաշտօններ թէ՛ որպէս խորհուրդի անդամ, թէ՛ որպէս ներկայացուցիչ Պորտո Գարթիէրվիլ ընտրատարածքին եւ թէ՛ քաղաքապետարանէն ներս: Առաջին չորս տարիներուն վարեցի խորհուրդին նախագահի պաշտօնը, իսկ վերջին չորս տարիներուն՝ Գործադիր վարչութեան փոխ նախագահի պաշտօնը: Պատասխանատուութիւններս մասնաւորաբար առնչուած կ'ըլլային ճարտարարուեստի, երիտասարդութեան վերաբերող, ինչպէս նաեւ քաղաքի բարելաւման աշխատանքներուն: Բաւական զբաղ տարիներ էին վերջին չորս տարիները: Այս ութը տարուան գործունէութիւնս ինձի համար առիթ եղաւ ծանօթանալու ոչ միայն հայ գաղութի ներկայացուցիչներուն, այլեւ՝ ամբողջ ընտրատարածքի ներկայացուցիչներուն, զանազան կազմակերպութիւններու, ժողովուրդին, անոնց մտահոգութիւններուն, ինչպէս նաեւ մաս կազմելու անոնց նախաձեռնութիւններուն եւ իրագործելու ընդհանուր նպատակներուն: Ամենէն հետաքրքրականը հայկական մեր նախաձեռնութիւններուն մասնակցելու էր որպէս քաղաքական անձնաւորութիւն, ինչպէս՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ անցեալ տարուան Հայաստանի վերանկախացման տօնին նուիրուած ձեռնարկներուն:



ուղղակի իմ ջանքերովս. օրինակ՝ Պորտո Գարթիէրվիլ շրջանին մէջ եւ ծրագրերն առաջադրած էի, որոնց մեծամասնութիւնը իրագործուեցան. ինչպէս՝ Լուի Պուրկի հանրային պարտէզի բարենորոգումը, քաղաքին մուտքին (Լա Շափէլի եւ Լորանսէնի շրջան) վերանորոգումը, ինչպէս նաեւ մշակութային կեդրոնի մը ապահովումը: Այս բոլորը ունեցան իրենց զբաղման անհրաժեշտ շրջանի ժողովուրդին վրայ:

Հ.- Ի՞նչ մտադրութեամբ եւ նպատակով առաջադրած էք ձեր թեկնածուութիւնը Ահունցիք-Գարթիէրվիլ շրջանի քաղաքապետի ընտրութիւններուն:

Յ.Շ.- Ապագայի իմաստով մտքիս կանգնած մը օգտաշատ ծրագրերն են, որոնց իրականացման կը ձգտիմ: Հետեւաբար, սոյն պաշտօնը, որուն թեկնածուութիւնս առաջադրած եմ, առիթը կրնայ ընծայել ինձի շրջանի ժողովուրդին հետ քննարկելու այս ծրագրերն եւ իրագործելու: Առաջին եւ ամենակարեւոր ծրագրերս պիտի ըլլայ շրջանի երիտասարդութեան ընծայել միջոցներ, որպէսզի անոնք ծրագրաւորեն իրենց ապագան, ոչ միայն իրենց յատկացնելով զբօսաւայրեր ու լողաւազաններ, այլեւ՝ աւելի հեռուն երթալով եւ նկատի առնելով նիւթական տաղանային ազդեցու-

թիւնը մեր երիտասարդութեան վրայ, մշակել նպատակաւորուած ծրագրերն՝ զիրենք մղելու դէպքի փայլուն ապագայ: Ասկէ բացի ունիմ այլ ծրագրերն՝ ճարտարարուեստի, մեր բնաշխարհին, գիւղատնտեսական, աննդառական, կենսամակարդակի բարելաւման եւ մշակութային մարզերուն առնչուած: Զիս շատ կը հետաքրքրէ 5-12 տարեկան պոլիկիններուն ուղղուած ծրագրերն մշակելը, որովհետեւ անոնք են մեր ապագայ երիտասարդութիւնը: Տնտեսական մարզին վերաբերեալ փոքր եւ միջակ դասակարգի գործարարներու (թաղային) ուղղուած ծրագրեր մը մշակած եմ՝ անոնց աջակցելու եւ իրենց գործիակերպը արդիականացնելու միտումով: Ծրագրեր մըն ալ ունիմ, որուն նպատակն է շրջաններուն պատմական պահպանել, որպէսզի իւրաքանչիւր շրջանի ժողովուրդը ծանօթանայ իր պարած շրջանին պատմական իրագործութիւններուն, կազմաւորման եւ զարգացման գործընթացին:

Հ.- Ներկայ էիք Մոնթրէալի 100-ամեակին առթիւ կազմակերպուած պատմական ֆայլարշաւին, որուն մասին թէ՛ քաղաքապետը եւ թէ՛ Մոնթրէալի մամուլը ճշմարիտ, թէ չափազանց կարգապահ էր. ի՞նչ են ձեր յիշատակները այդ օրէն:

Յ.Շ.- Նախ շատ տպաւորիչ էր ինձի

համար համագործակցութիւնը մեր ժողովուրդին եւ այս մակարդակի քայլարշաւի մը իրագործումը, որ իսկապէս պատմական էր: Նշեմ, որ առաջին անգամ ըլլալով քաղաքին հիմնական պողոտան փակուած էր, որպէսզի իրագործուի 100-ամեակի այս քայլարշաւը: Տպաւորիչ էր մասնաւորաբար քաղաքապետին եւ այլ քաղաքական անձնաւորութիւններուն, ինչպէս նաեւ մեր ժողովուրդին մեծ թիւով մասնակցութիւնը: Հարկ է նշել, որ մենք եւս քաղաքական ներքին մակարդակի վրայ անձայն աշխատանք տանելով յաջողեցանք անմոռուկ տեղադրել քաղաքապետարանի մուտքին, որ այդտեղ մնաց մէկ տարուան տեւողութեամբ, տակը ծանօթագրութեամբ մը՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան նահատակներուն: Այս մէկը յաճախ քննադատութեան առարկայ դարձաւ քաղաքապետարանի շրջանակներէն ներս, սակայն մենք յաջողեցանք տրամադրութիւնները ի նպաստ մեզի հռչակուել:

Հարցազրույցի առիթ է մեզի համար նաեւ քաղաքապետին տպաւորութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ, որպէս քաղաքապետի եւ պահանջատէր ժողովուրդ, որ նաեւ օրինակ կը հանդիսանայ այլ ազգերու, որոնք նոյնպիսի անարդարութեանց զոհ եղած են: Անոնք վերջերս յաճախ կը խմբուին մեր շուրջ եւ մասնակից կը դառնան մեր պահանջատիրական նախաձեռնութիւններուն:

Հ.- Երբ համայնքը ձեզի դիմած է՝ ընդառաջած էք. օրինակ՝ յուշարձան մը կանգնեցնելու գծով:

Յ.Շ.- Անշուշտ, սակայն իմ կարծիքովս յառաջիկայ տարիներուն ոչ միայն ցեղասպանութիւնը յուշող յուշարձաններ պէտք է զետեղենք քաղաքին մէջ, այլ մեր մշակութիւնն պատմութիւնը պէտք է հրամայենք Մոնթրէալի քաղաքացիին, ինչպէս կ'ընեն այլ ժողովուրդներ: Այս առիթը կ'ուզեմ յիշեցնել, թէ ես միշտ ալ

Ծիթիլեան... Ծար. էջ 9
Հարցազրույցը վարեց՝
Սոնա Թիթիլեան Կէտիկեան

CIBC



Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7



ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aaarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!*

NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan



NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Միջ-թեմական Հոգեւորականաց «Վերանորոգում» թեմայով համագումարը հասաւ իր աւարտին



(Լուսանկարները՝ Արմէն Ալեմեանի)

Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերու Հոգեւորականաց ութերորդ Համագումարը տեղի ունեցաւ 2-5 Հոկտեմբեր 2017-ին, Գանատայի Հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարբէն Արք. Չարեանի հրաւերով եւ հովանաւորութեամբ Գանատայի Ազգային Առաջնորդարանի:

Երկուշաբթի, 2 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան Հիւսիսային Ամերիկայի հոգեւորականները ժամանեցին Մոնթրէալ եւ Ազգային Առաջնորդարանէն ներս տեղի ունեցաւ յատուկ ընդունելութիւն եւ հիւրասիրութիւն:

Այս նպատակով ի մի խմբուած 37 հոգեւորականները, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին 2017 թուականը «Վերանորոգման» տարի հռչակելուն առթիւ, արժանացին պատգամին մէջ տեղ գտած մտածումները եւ անոր շունչով վերանորոգուեցան, յատկապէս Թարգմանչաց տօնին առիթով՝ Հայ եկեղեցւոյ նախահայրերու ուխտով:

Երեքշաբթի առաւօտեան, Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ զիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն, որուն աւարտին Գերապատիւ Տ. Սահակ Ծ. Վրդ. Եմիչեան կատարեց խորհրդածութիւն «Վերանորոգումը եկեղեցւոյ առաքելութեան առանցքը» նիւթին շուրջ:

Պաշտօնական բացումը կատարուեցաւ թեմերու Առաջնորդներուն՝ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Չօլոյեանի (Արեւելեան թեմ), Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Արեւմտեան թեմ) եւ Գերաշնորհ Տ. Բարբէն Արք. Չարեանի (Գանատա) աղօթքներով եւ ողջոյնի խօսքերով, որոնցմէ ետք տեղի ունեցաւ Դիւանի ընտրութիւն: Դիւանի առաջին ատենապետն էր Գերաշնորհ Տ. Անուշահան Եպս. Դանիէլեան, երկրորդ ատենապետն էր Գերապատիւ Տ. Թորգոմ Ծ. Վրդ. Տօնոյեան, իսկ ատենադպիրն էր Հոգեշնորհ Տ. Գարեգին Վրդ. Շիրսեան:

Համագումարին ընթացքին տեղի ունեցան դասախօսութիւններ: Առաջին նիւթն էր «Ամուսնական խորհրդատուութիւն», որուն դասախօսն էր Արժանապատիւ Տ. Նարեկ ՔՏՆ. Թրթրեանը: Իսկ երկրորդ նիւթը՝ «Մահը, սուգը եւ ընտանիքը», որուն դասախօսն էր փրոֆ.

Կարին Փափազեան Չոհրապեան: Դասախօսութիւններէն ետք Գերապատիւ Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեանը կատարեց խորհրդածութիւն, վերանորոգումը Նոր Կտակարանին մէջ՝ «Քրիստոս ինքն է աղբիւրը վերանորոգման» թեմայով:

3 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան, մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ: Պատարագիչն ու քարոզիչն էր Գերաշնորհ Տ. Անուշահան Եպս. Դանիէլեան: Հոգեւորականաց դասը սպասարկեց Սուրբ Խորանին եւ կատարեց Սուրբ Պատարագի երգեցողութիւնը: Պատարագի աւարտին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ երեք թեմերէն ներս ծառայած եւ վախճանած հոգեւորականներու հոգիներու խաղաղութեան համար:

Հոգեհանգստէն ետք Մոնթրէալի «Աւետիս Աճարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն հրաւիրուած էր հաւատացեալ ժողովուրդը: Այս առիթ մըն էր, որ ժողովուրդը զրուցէ հոգեւորականներուն հետ եւ ստանայ անոնց օրհնութիւնը:

4 Հոկտեմբեր 2017-ի առաւօտը սկսաւ Արեւագալի ժամերգութեամբ, որուն աւարտին Գերապատիւ Տ. Թորգոմ Ծ. Վրդ. Տօնոյեան կատարեց խորհրդածութիւն, վերանորոգումը Հին Կտակարանին մէջ՝ «Աստուած է աղբիւրը վերանորոգման» նիւթին մասին:

Եկեղեցական արարողութիւնէն ետք Հոգեւորականները այցելեցին Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային Վարժարան, ուր բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք աշակերտները հրամցուցին փունջ մը բանաստեղծութիւններ եւ երգեր, նուիրուած Սրբոց Թարգմանչաց տօնին: Աւարտին, թեմակալ առաջնորդ՝ Բարբէն Արքեպիսկոպոս, իր գնահատանքը եւ խրախուսական խօսքը փոխանցեց աշակերտութեան եւ ուսուցչական կազմին՝ ըսելով. «Ամուսն պահեցէք մեր ոսկեղնիկը, ապրեցէք հպարտօրէն եւ մնացէ՛ք երաշխաւորները Հայ ժողովուրդի ապագային»:

Համագումարը շարունակուեցաւ կէսօրէ ետք, կեդրոնանալով դիակիզումի, թեմերու յառաջիկայ տասնամեայ ծրագրի, հոգեւորականաց վերանորոգման թեմաներու եւ համայնքներու այժմէական մարտահրաւէրներուն վրայ:

Օրակարգի աւարտին Հոգեշնորհ Տ. Վարդան Վրդ. Թաշճեան կատարեց խորհրդածութիւն՝ «Նիկողիմոսի հանդիպումը Յիսուսի հետ» Աւետարանական հատուածին մասին: Համագումարը իր աւարտին հասաւ թեմակալ առաջնորդներու օրհնութեան խօսքերով:

Հիւսիսային Ամերիկայի Հայ Հոգեւորականաց Համագումարը պատեհ առիթ մը նկատելով, թեմիս առաջնորդ Բարբէն Արքեպիսկոպոսի որոշումով, Համագումարի եզրափակիչ ճաշկերոյթը սովորական հաւաքական ճաշի պարունակէն դուրս բերուեցաւ եւ մեծարանքի երեկոյի բնոյթ ստացաւ՝ նուիրուած 50 տարիներու վաստակ ունեցող եկեղեցականի մը: Անձնուէր Հայ եկեղեցական մը, որ 50 տարիներ առաջ Ս. Խորանին դիմաց ծնրադիր՝ ուխտ մը կնքեց իր եւ Աստուծոյ, իր եւ իր ժողովուրդին միջեւ, ծառայելու համար Աստուծոյ եւ ժողովուրդին: Որդիական երախտքով կանգնողառանք Ամերիկայի Արեւելեան թեմի եւ Գանատայի նախկին վաստակաշատ առաջնորդ եւ Ամերիկայի Արեւելեան թեմի այժմու առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Չոլոյեանի մասին:

Օշական Սրբազանի կեանքն ու եկեղեցական գործունէութիւնը ներկայացնելէ առաջ, Գանատայի Հայոց թեմի Ազգային վարչութեան ատենապետ տիկին Ծովիկ Թերզեանը հրաւիրուեցաւ, որպէսզի իր բարի գալուստի խօսքը փոխանցէ:

Օշական Արքեպիսկոպոսի կեանքն ու գործունէութիւնը ներկայացուց դպրեվանքի իր դասընկեր եւ օժակից Գերաշնորհ Տ. Վարուժան Արք. Հերկէլեանը: Բարբէն Արքեպիսկոպոս պատեհ առիթ նկատեց յիշելու նաեւ Վարուժան Արքեպիսկոպոսի քահանայական ձեռնադրութեան եւ օժման 50-ամեակը: Ան իր մասին վկայութիւն մը տուաւ, որպէս իր ուսուցիչը:

Մեծարանքի երեկոյի ընթացքին յարգանք ընծայուեցաւ նաեւ Սուրբ Արքեպիսկոպոս Գաթարոյեանին իր քահանայական ձեռնադրութեան եւ օժման 55-ամեակին եւ եպիսկոպոսացման 40-ամեակին զոյգ առիթներով, յիշատակուեցան նաեւ Վարուժան Արքեպիսկոպոսի, Խաժակ Արքեպիսկոպոսի եւ Մուշեղ Արքեպիսկոպոսի եպիսկոպոսացման 20-ամեակը:


Երեկոյի գեղարուեստական յայտագիրը ճոխացուցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանները՝ հոգեւոր, ազգային եւ յեղափոխական երգերով:

Յոբելեար սրբազանը՝ Օշական Արքեպիսկոպոս, խօսք առաւ եւ անդրադարձաւ Հայ եկեղեցականի ծառայութեան, նուիրուածութեան եւ ակնկալուած համեստ նկարագրին մասին: Ան շնորհակալութիւն յայտնեց Բարբէն Արքեպիսկոպոսին՝ իրենց ընծայուած յարգանքին եւ կատարուած մեծարանքին համար:

Մուշեղ Արքեպիսկոպոս շնորհակալական խօսքեր եւ գնահատանքի զգացումներ յայտնեց մոնթրէալահայ գաղութին՝ ջերմ ընդունելութեան եւ կազմակերպուածութեան համար:

Երեկոյի եզրափակուեցաւ Գանատայի Հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարբէն Արք. Չարեանի շնորհակալական խօսքերով, յատկապէս ուղղուած տիկին Շաքէ Կէօնճեանին, որ իր նուիրատուութեամբ հովանաւորեց Համագումարի բոլոր ծախսերը: Ան դարձեալ շնորհաւորեց յոբելեար սրբազանը, ինչպէս նաեւ Սուրբ Արքեպիսկոպոսը, Վարուժան Արքեպիսկոպոսը, Խաժակ Արքեպիսկոպոսը եւ Մուշեղ Արքեպիսկոպոսը:

Բարբէն Արքեպիսկոպոսի «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» ու «Ի Վեհ Բարձրաց» մաղթերգերով երեկոյն հասաւ իր աւարտին:

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org

ANI BAKERY **ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ**

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատր՝ Արսեն Տապալադեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
100-170-15110P.2

Society for Orphaned Armenian Relief (SOAR)
Montreal Chapter
Annual Fundraiser
October 21, 2017

SOAR'S 2017 ANNUAL FUNDRAISER
at the VICTORIA HOTEL, MONTREAL QC CANADA 1100 ST.

Cocktails 5:30
Dinner 6:30

Followed by a musical program and a concert
performance by children for children

Cover Charge Per Invoice 500.00 CDN
(official tax receipt will be issued)

For tickets or additional information please contact
Dr. Soudik Yeretsian 514-836-1562 or yeretsian@sympatico.ca
or Souren Hachjian at 514-549-1415 or souren@vidcon.com.ca

Proceeds from the event will be used for the
renovation of the gymnasium at vardashen Orphanage
visit <http://soar-us.org/distarm2017.html#gymnasium>
for more information

SOAR Montreal is an affiliate of the Society for Orphaned Armenian Relief, a nonprofit
organization based in the US, dedicated to providing humanitarian relief to orphaned Armenian
children. Working with a loyal donor base and a trusted network of partners, SOAR distributes
clothing, educational supplies, medicine, and other essential resources to orphaned Armenian
children throughout the world.

LAVALLOIS EN MOUVEMENT!
LAVAL ON THE MOVE

To ensure prosperity

Help
retail businesses innovate
to meet consumers' new
demands more efficiently

Develop
new collective transit
measures locally and
on a regional scale

Support
the emergence of a new
generation of farmers and
agricultural innovations

"On November 5, let's keep the movement going!"

✓ Mayor of Laval **Marc Demers**

MOUVEMENT **ÉQUIPE MARC DEMERS**
mouvementlavallois.org



Մոնթրեալի Հայ Դատի յանձնախումբը կոչ կ'ուղղէ Մոնթրեալի հայութեան, որ Նոյեմբեր 5-ի քաղաքապետական ընտրութիւններուն քուէարկեն հետեւեալ թեկնածուներուն, որոնք կը վայելեն Հայ Դատի յանձնախումբին զօրակցութիւնը:

Le Comité National Arménien de Montréal appelle les Montréalaises et Montréalais à voter le 5 novembre 2017 en faveur des candidates et candidats suivants.



Denis Coderre
Candidat - Maire de Montréal



Harout Chitilian
Candidat - Maire d'arrondissement
Arr. Ahuntsic-Cartierville



Effie Giannou
Candidate - conseillère de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Bordeaux-Cartierville



Hadrien Parizeau
Candidat - conseiller de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Saint-Sulpice



Raphaël Melançon
Candidat - conseiller de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Ahuntsic



Lorraine Pagé
Candidate - conseillère de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Saull-au-Pécollet



Alan DeSousa
Candidat - Maire d'arrondissement
Arr. Saint-Laurent



Aref Salem
Candidat - conseiller de ville
Arr. Saint-Laurent
District Norman-McLaren



Francesco Miele
Candidat - conseiller de ville
Arr. Saint-Laurent
District Côte-de-Liesse



Michèle D. Biron
Candidate - conseillère d'arrondissement
Arr. Saint-Laurent
District Norman-McLaren



Jacques Cohen
Candidat - conseiller d'arrondissement
Arr. Saint-Laurent
District Côte-de-Liesse



Mary Deros
Candidate - conseillère de ville
Arr. Villeray-Saint-Michel-Parc-Extension
District Parc-Extension



Anie Samson
Candidate - Maire d'arrondissement
Arr. Villeray-Saint-Michel-Parc-Extension



Dimitrios Jim Beis
Candidat - Maire d'arrondissement
Arr. Pierrefonds-Roxboro



Luc Ferrandez
Candidat - Maire de l'Arrondissement
de Plateau-Mont-Royal



Craig Sauvé
Candidat - Conseiller de Ville,
Saint-Henri-Est-Petite-Bourgogne-Pointe-Saint-Charles-Griffintown

BAL MASQUÉ

Danse Annuelle Homenetmen Gamk
ՀԱՐԱ Կանգի պարահանդես



Samedi: 28 Octobre, 2017
Portes Ouvertes à 19h30
Le Château Royale
3500 Boulevard du Souvenir, Laval
Sato Tashjian et orchestre.
Admission général 60\$
Admissions pour les enfants de moins de 12 ans 40\$
Pour les réservations de table veuillez appeler:
Hosmik Bimadlian: 514-831-4755
Melissa Thomassian: 514-831-7138

Samedi: 28 Հոկտեմբեր 2017-ին
Երկայեան ժամը 7:30-ին
Տոմսերու սակ 60\$
12 տարիանոսի վրայ 40\$
Տոմսերը ապահովելու համար Գիսել Բուսովի ֆիլիանսերին 514-831-4755
Եւ Մելիսա Թոմասեանին 514-831-7138

Sato Tashjian

W/E DJ
Chris24




15 Դեկտեմբեր 2017

Սիրելի Լավալյանակ հարեանակցներ,

Դեկտեմբեր 10, 2017-ի կրթով կը յայտնվից ձեզի, թէ Լավալի քաղաքապետարանի ընտրութիւնները (élection municipale) սերի պիտի ունենան Կրթակի 5 Կարգերը, 2017-ին:

Ուրախ ենք յայտնելու, թէ այս ընտրութիւններուն Rensud ցնորաշքեանէն ունից հայ թեկնածու մը, սոցրդ Արամ Էջակեօզ, որ մաս կը կազմէ Mouvement Lavallois-Équipe Marc Demers-ի խումբին:



Տոցրդ Արամ Էջակեօզ երկու տարիներ ծառայած է Քայ Դատին, ընթացիկ տնտեսական և քաղաքական գործունէութիւններու միջոցով: Ան նկատ է յատուցած անցաւորը արդարեան հաճախ եւ յատուցած հարկական ցնորաշքեաններն ուրացան ղեմ ապացոյցին:

Տոցրդ Արամ Էջակեօզ ապրտած է Ժողովարանի Louis Pasteur Խաւարարանը մանագիտութեան (microbiologie) եւ առաւան զարցան է Գեւորտու, Խաւարարանով Լավալ եւ աշխատելով գիտական հետազոտութեան վարդին մը:

Արդ, սիրելի հարեանակցներ, կոչ կ'ընողներ ձեզի մանագիտութեան **Տոցրդ Արամ Էջակեօզի** ցնորաշքեանին: Կարտուելով Քայ Դատի գրասենեակ տե՛ք զեզո՛ք զե կամ հեռագրելով՝ 438-568-6777 թիվը:

Կրեաք նոյնպէս ուղղակի կապուել **Տոցրդ Արամ Էջակեօզի** ընտրական գրասենեակ՝ aramez@movementlavallois.org կամ հեռագրելով՝ 514-963-7464 թիվը: Գրասենեակի հասցեն հետեւեալն է - 1635 Boulevard de l'Avenir 5 Laval Qc, H7S 2W4

Յոյսով ենք, որ ընթացք կուտայ մեր կրթիւ եւ միասնաբար կը յաջողինք ընտրելու Լավալի Բարոյապետարանի առաջին հայ թեկնածուն:

Կանխապալտ շնորհակտութեամբ՝
Լավալի Քայ Դատի Յանձնախումբ

Les encadrements
olympic


SINCE 1988 OLYMPIC PICTURE FRAMES HAS MADE OR IMPORTED HUNDRED OF THOUSANDS OF FRAMES FOR PRINTINGS, WATERCOLORS, LITHOGRAPHS AND MIRRORS.

OUR CUSTOMERS INCLUDE FRAMING STORES, ART GALLERIES, MUSEUMS, ARTISTS AS WELL AS PRIVATE CLIENTS.

IN STORE WE HAVE MORE THAN 3000 SAMPLES, AS WELL AS 600 READY FRAMES FOR YOU TO CHOOSE. FROM BACKED BY OUR EXPERTISE AND SOLID EXPERIENCE WE WILL ADVISE YOU IN MAKING THE RIGHT CHOICE.

OUR WHOLESALE PRICES ARE MORE THAN COMPETITIVE. BEFORE BUYING COME AND SEE US, YOU WILL BE REALLY PLEASED.

Մեծաքանակ Շրջանակներու Արտադրութիւն



6831, DE L'ÉPÉE,
(ACCÈS PAR BEAUMONT)
MONTREAL (QUÉ.) H3N 2C7
TEL./FAX. (514) 495-1930
encadrementolympic.com

COUPON
VALID UNTIL
DECEMBER 2017
15% OFF

La troupe de théâtre
Hay Pem présente

ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՍԿԻԶԲԸ

Le début des temps

Adaptée de
A MARAVILHOSA ESTÓRIA DO SAPO TARÔ-BEQUÊ
de Márcio Souza

Avec la participation spéciale sur scène de
NANCY TOROSIAN

ՔՐԵՂՈՒԼՈՒԹՅԱՆ
ԲԻՐՈՅԵԼԻ ՏԻՆԻՏԻԱԼՈՒԹՅԱՆ
ՄԵՏԻՆՈՒՄ ԵՎ ԲԵՏՄԱՆՈՒԹՅԱՆ
ԼԱՎԱԼ ԴԱՄԱ ԹԵԱՏՐՈՒԹՅԱՆ

Samedis à 20 h (surtitrage en français)
4 et 11 NOVEMBRE 2017

Dimanches à 19 h (English surtitles)
5 et 12 NOVEMBRE 2017

THÉÂTRE BEAUBOIS
4901, rue du Collège Beaubois, Pierrefonds (Qc) - Canada H8Y 3J4

BIL LETS : Centre Telekoyan 514 747-6680 | Page 514 571 8241

Sièges réservés : 50 \$ Admission générale : 30 \$ Étudiants : 20 \$

ՄԱՆՐԱՆԿԱՐ Բուճ պատճառը

Այդ կիրակի հիւսիս երթալու պատրուակները շատ էին։ Փորձեմ թուել՝ առանց անպայման առաջնահերթութեան կարգի։

Առաջին՝ առօրեայէդ դուրս գալու եւ «քիչ մը փոխուելու» պահանջը, մանաւանդ երբ այդ առօրեադ այնքան քեզ կը դամէ համակարգիչի պատատին առջեւ։

Երկրորդ՝ աշնան սկիզբի տակաւին յամեցող ջերմ օդերէն ալ օգտուելու կարիքը, երբ գիտենք որ ցուրտը դարանակալ կը սպասէ դռան ետեւ կամ յեռներէն անդին՝ իր երկարատեւ տիրապետութիւնը վերահաստատելու համար մեր կողմերը։

Երրորդ՝ Մոնթրէալի հիւսիսը՝ Լաւրենտեան չքեցող շրջանի աշուճը, աշնան զգլխիչ գոյները վայելելու տենչը, նախքան շրջապատի սպիտակումը, որ իր կարգին տարբեր գեղեցկութեամբ պիտի պարզէ բնութիւնը մեր առջեւ։

Չորրորդ՝ Սենթ-Ատելի ժամադրաՎայր պանդորը՝ «Շանթըզիբ»-ը վերստին այցելելու ու անոր խոհանոցի համադամները ճաշակելու փորձութիւնը։ Անմիջապէս ճշտեմ, որ անուանի այս պանդոկին առնչուած յիշատակներ չեն պակսիր,— այստեղ ունեցած ենք լսարաններ, ժողովներ, տարեդարձեր եւ գանազան այլ համախմբումներ։

Հինգերորդ ու թերեւս ամենէն ազդեցիկը այս պատրուակներէն, որ այդ օր մեզ այդտեղ կը հաւաքէր, Մոնթրէալի եգիպտահայերու ընկերակցութեան ծանուցումը՝ հոն սօճակատարելու իր հիմնադրութեան քսաներորդ տարեդարձը, աւելի ճիշտ՝ տարեդարձը յիշատակող եօրեայ ձեռնարկներէն մէկը։ Այդ էր, որ կը ստեղծէր առիթը, որ վերոյիշեալ պատրուակներն ալ ցայտէին ու մեզ մեր տեղէն շարժէին։

